ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> նոյեմբերի 2013 թվականի N 119 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԹՎՈՎ 9 (ԻՆԸ) ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ, ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՓԱԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԵՐԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասով, 64-րդ հոդվածի 5-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ, 15-րդ, 21-րդ կետերով, 52-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 2-րդ կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասով, ընկերությունների կանոնադրությունների 8-րդ գլխի 8.2 կետի 2-րդ ենթակետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Վերակազմակերպել Գյումրու համայնքային ենթակայության <<Ն. Տիգրանյանի անվան արվեստի դպրոց>>, <<Ալլեգրետտո>> երաժշտական դպրոց>>, <<Շերամի անվան <<Կվինտետ>> երաժշտական դպրոց>>, <<Օկտետ>> երաժշտական դպրոց>>, <<Օկտավա>> երաժշտական դպրոց>>, <<Ս. Մերկուրովի անվան <<Բնանկար>> գեղարվեստի դպրոց>>, <<Ա. Շաբոյանի անվան պարարվեստի դպրոց>>, <<Ստ. Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոն>> և <<Մարմնամարզիկ>> Փակ Բաժնետիրական Ընկերությունները որպես համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ (ՀՈԱԿ) հետևյալ վերանվանումներով.

1) <<ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Նիկողայոս Տիգրանյանի անվան թիվ 1 արվեստի դպրոց>>,

2) <<ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Արմեն Տիգրանյանի անվան թիվ 3 երաժշտական դպրոց>>,

3) <<ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոց>>,

4) <<ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ազատ Շիշյանի անվան թիվ 6 երաժշտական դպրոց>>,

5) <<ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Խաչատուր Ավետիսյանի անվան թիվ 7 երաժշտական դպրոց>>,

6) <<ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ս. Դ. Մերկուրովի անվան նկարչական դպրոց>>,

7) <<ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի պարարվեստի դպրոց>>,

8) Գյումրի համայնքի <<Ստեփան Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոն>>,

9) <<ՀՀ Շիրակի Մարզի Գյումրի համայնքի մարմնամարզական մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց>>:

2. Հաստատել վերակազմակերպվող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների նոր խմբագրությամբ կանոնադրությունները՝ համաձայն հավելվածներ N N 1-9-ի,

3. Հաստատել վերակազմակերպվող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների փոխանցման ակտերը՝ համաձայն հավելվածներ N N 10-18-ի,

4. Հաստատել վերակազմակերպվեղ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները՝ համաձայն հավելվածներ N N 19-27-ի,

5. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի կողմից առաջադրվող թվով 9 /ինը/ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թեկնածություններին՝ համաձայն հավելված N 28-ի,

6. Դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տարածքային բաժին՝ վերակազմակերպվող թվով 9 (ինը) համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները օրենքով սահմանված կարգով գրանցելու համար:

Կողմ (19) **Դեմ (0)** **Ձեռնպահ (1)**

Ա.Ադամյան_____ **Լ.Բարսեղյան**_____

Գ.Ադամյան_____

Ա.Բաղեյան _____

Ա.Բաղրամյան_____

Մ.Գաբոյան_____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եղիգարյան _____

Գ.Թաթարյան_____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Վ.Հունանյան_____

Ն.Մեսրոպյան_____

Ռ.Մխիթարյան_____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2013թ. նոյեմբերի 12

ք.Գյումրի